

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ No. 14456/06

ՕՆԻԿ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆՆ

ընդդեմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 34-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ  
ԳԱՆԳԱՏԻ ՀԱՎԵԼՎԱԾ

Բացառապես. *«Ինտերակտիվ մարդու իրավունքներ»* Եվրոպական իրավունքի 2007-2008  
թթ. դատախաղ-մրցույթի նպատակների համար

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I.	ԴԱՏԱԽԱՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ .....	3
II.	ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ .....	3
III.	ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ .....	5
IV.	ՓԱՍՏԵՐԻ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ .....	6
1)	Վարույթները ներպետական դատարաններում .....	7
2)	Կատարողական վարույթը.....	9
V.	ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔԻ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ .....	13

## **I. ԴԱՏԱԽԱՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ**

1. «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2007-2008 թթ. դատախաղ-մրցույթը կազմված է մտացածին փաստերի և իրադարձությունների հիման վրա: Դատախաղ-մրցույթի գործի իրադարձությունները տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետությունում և գործի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետությունում մինչև 2006 թվականի ապրիլի 30-ը գործող օրենսդրությունը:
2. «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2007-2008 թթ. դատախաղ-մրցույթն իրականացվելու է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առջև՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա կամ Կոնվենցիա), Կոնվենցիային կից Արձանագրությունների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կանոնակարգի (այսուհետ՝ Եվրոպական դատարանի կանոնակարգ) համաձայն: Դատախաղ-մրցույթի ընթացքում Դիմումատուն և Պատասխանող մասնակից պետությունը իրենց գրավոր փաստարկները մշակելիս և ներկայացնելիս պետք է առաջնորդվեն Հայաստանի Հանրապետությունում մինչև 2006 թվականի ապրիլի 30-ը գործող օրենսդրությամբ, Եվրոպական կոնվենցիայով, Կոնվենցիայի Արձանագրություններով, Եվրոպական Դատարանի վճիռներով, միջազգային և սովորութային իրավունքի հանրաճանաչ նորմերով և սկզբունքներով ինչպես նաև համապատասխան այլ փաստաթղթերով:
3. Դատախաղ-մրցույթին մասնակցող բոլոր թիմերը պետք է առաջնորդվեն սույն ցուցումներով և ընթացակարգով, Դատախաղ-մրցույթի դատական գործով, ինչպես նաև «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» 2007-2008 թթ. եվրոպական իրավունքի դատախաղ-մրցույթի Պաշտոնական կանոններով:

## **II. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

4. «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի դատախաղ-մրցույթի գործի համար առիթ է հանդիսացել Կոնվենցիայի 34-րդ հոդվածի հիման

վրա Հայաստանի Հանրապետության քաղաքացի պարոն Օնիկ Բաղդասարյանի կողմից 2006 թվականի հունիսի 5-ին ընդդեմ Հայաստանի Հանրապետության Եվրոպական դատարան ներկայացված գանգատը (N: 14456/06):

5. 2007 թվականի հունիսի 5-ին գանգատը փոխանցվում է Դատարանի Երրորդ բաժանմունք՝ Եվրոպական դատարանի Կանոնակարգի 52-րդ կանոնի 1-ին կետի համաձայն: Այդ Բաժանմունքում, Եվրոպական դատարանի Կանոնակարգի 26-րդ կանոնի 1-ին կետի համաձայն ձևավորվում է Պալատ՝ գործի քննությունն ապահովելու համար (Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-ին մաս):
6. 2007 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ Դատարանը գանգատը ընդունելի է հայտարարում:
7. Դիմումատուն և պատասխանող կառավարությունը հրավիրվում են ներկայացնելու իրենց գրավոր առարկությունները (կանոն 59-ի 1-ին կետ): Սույն դատախազի իմաստով գրավոր առարկություններն են հանդիսանում մրցույթի Պաշտոնական կանոններով և ժամանակացույցով սահմանված կարգով և ժամկետներում մասնակից թիմերի կողմից սույն փաստաթղթի հինգերորդ գլխում սահմանված հարցերի (համապատասխանաբար դիմումատուի և պատասխանող կառավարության համար) կապակցությամբ ներկայացված գրավոր փաստարկները:
8. 2007 թվականի հոկտեմբերի 15-ին Դատարանը որոշում է պարոն Բաղդասարյանի կողմից ներկայացված գանգատի ըստ էության քննության նպատակով 2008 թվականի փետրվարի 8-ին բանավոր լսումներ հրավիրել՝ Եվրոպական դատարանի կանոնակարգի 59-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն: Սույն դատախազի շրջանակներում բանավոր լսումները կկայանան «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2007-2008 թթ. դատախազ-մրցույթի կազմակերպչի կողմից սահմանված օրերին:

### **III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ**

9. Դիմումատուն պնդում է, որ խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իր արդար դատաքննության իրավունքը, քանի որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 5-ի դատական նիստի ժամանակի և վայրի մասին ինքը պատշաճ կարգով չի ծանուցվել, ինչի հետևանքով զրկվել է նշված դատական նիստին մասնակցելու և իր իրավունքներն ու շահերը դատարանում պատշաճ կարգով պաշտպանելու հնարավորությունից:
10. Դիմումատուն նաև բողոքում է, որ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից, իր օգտին կայացրած և օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռը չկատարելու կապակցությամբ, ինչի հետևանքով, ի խախտումն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և Կոնվենցիայի Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի, ինքը չի ստացել այն գումարը, որը գործատուն դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա պետք է վճարեր իրեն:
11. Դիմումատուն նաև պնդում է, որ չի ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, քանի որ գործնականում զրկված է եղել ներպետական դատարաններում հարկադիր կատարողի գործողությունները դատական կարգով վիճարկելու հնարավորությունից:

#### IV. ՓԱՍՏԵՐԻ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ

1. Պարոն Օնիկ Բաղդասարյանը (այսուհետ՝ «Դիմումատու») Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Դիմումատուն բնակվում է Երևան քաղաքի Կոմիտասի պողոտա, շենք 8, բնակարան 10 հասցեում: Դիմումատուն 48 տարեկան է, ամուսնացած չէ: Դիմումատուն ունի բարձրագույն կրթություն: Նա 1988 թվականին ավարտել է Երևանի Պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը:
2. Դիմումատուն, 1996 թվականի սեպտեմբերի 26-ին աշխատանքի է ընդունվում «Մարս» գործարանում, որպես միջազգային առևտրի գծով մասնագետ: 1996 թվականի դրությամբ Դիմումատուի աշխատավարձը կազմում էր ամսեկան 45.000 ՀՀ դրամ:
3. 2000 թվականի հոկտեմբեր ամսին դիմումատուն թողնում է իր այդ աշխատանքը և նոր աշխատանքի է ընդունվում «ԼՖՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում (այսուհետ տեքստում նաև «Գործատու»), որպես առևտրի ոլորտի խորհրդատու: Դիմումատուի նոր աշխատավարձն անհամեմատ ավելի բարձր էր և կազմում էր 200.000 ՀՀ դրամ: Նրա աշխատավարձն աստիճանաբար աճել էր, և 2004 թվականի դրությամբ կազմում էր արդեն 454.000 ՀՀ դրամ:
4. Սակայն 2005 թվականի մարտ ամսին ընկերության տնօրենը փոխվում է: Նոր նշանակված տնօրենը, ցանկանում էր կադրային լուրջ փոփոխություններ իրականացնել և 2005 թվականի օգոստոսին, ընկերության նոր տնօրենն առաջարկում է դիմումատուին իր նախաձեռնությամբ լուծել աշխատանքային պայմանագիրը, քանի որ տնօրենի կարծիքով, դիմումատուն չէր համապատասխանում իր պաշտոնին ներկայացվող պահանջներին: Դիմումատուն, բնականաբար, չէր ցանկանում կորցնել իր բավական լավ վարձատրվող աշխատանքը և հրաժարվում է պայմանագիրը լուծելուց:
5. Այնուամենայնիվ 2005 թվականի սեպտեմբերի 28-ին գործատուն իր նախաձեռնությամբ լուծում է դիմումատուի աշխատանքային պայմանագիրը ՀՀ

Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիման վրա՝ աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու հիմքով: Գործատուն օրենքով սահմանված կարգով դիմումատուի հետ վերջնահաշվարկ չի կատարում:

### ***1) Վարույթները ներպետական դատարաններում***

6. Դիմումատուն 2005 թվականի հոկտեմբերի 5-ին հայց է ներկայացնում Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ (այսուհետ՝ առաջին ատյանի դատարան) բողոքելով իր աշխատանքային պայմանագիրն օրենքի խախտմամբ լուծելու և իր հետ օրենքով սահմանված կարգով վերջնահաշվարկ չկատարելու կապակցությամբ: Դիմումատուն, ինչպես առաջին ատյանի դատարանում, այնպես էլ ներպետական բոլոր ատյաններում իրականացված վարույթներում ինքն է պաշտպանել իր շահերը և չի օգտվել փաստաբանի ծառայություններից:
7. 2005 թվականի հոկտեմբերի 25-ին առաջին ատյանի դատարանը դիմումատուի հայցը թողնում է առանց բավարարման՝ վճռելով, որ գործատուի կողմից դիմումատուի աշխատանքային պայմանագիրը միակողմանիորեն լուծելը համապատասխանում է ՀՀ Աշխատանքային օրենսգրքին:
8. Դատարանն իր վճռով նաև պարտադրում է գործատուին ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով վերջնահաշվարկ կատարել դիմումատուի հետ և նրան վճարել օրենքով սահմանված չափով նրան հասանելիք գումարը, որը ըստ դատարանում կատարված հաշվարկի կազմում էր 652.000 ՀՀ դրամ:
9. 2005 թվականի նոյեմբերի 4-ին դիմումատուն առաջին ատյանի դատարանի վճիռը բողոքարկում է վերաքննության կարգով՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան (այսուհետ՝ վերաքննիչ դատարան):
10. Վերաքննիչ դատարանը 2005 թվականի դեկտեմբերի 5-ին կայացված իր վճռով առաջին ատյանի դատարանի վճիռը թողնում է անփոփոխ իսկ դիմումատուի բողոքը՝ առանց բավարարման: Վերաքննիչ դատարանում նիստին դիմումատուն ներկա չի լինում: Այս կապակցությամբ Վերաքննիչ դատարանն իր վճռում նշում է.

«Հայցվորը անձամբ ստացել է դատական նիստի վայրի և ժամանակի մասին ծանուցագիր, սակայն դատարան չի ներկայացել»:

11. Ըստ գործում առկա փաստաթղթերի, 2005 թվականի նոյեմբերի 21-ին վերաքննիչ դատարանը պատվիրված նամակով տեղեկացրել է դիմումատուին, որ վերաքննիչ դատարանի նիստը կայանալու է 2005 թվականի դեկտեմբերի 5-ին:
12. Համաձայն փոստային կնիքի, այդ նամակը դիմումատուի բնակության վայրի փոստի տարածքային բաժանմունքը ստացել է 2005 թվականի նոյեմբերի 22-ին և նույն օրն ուղարկել դիմումատուին: Դիմումատուն պնդում է, որ ինքն այդ ծանուցագիրը ստացել է միայն 2005 թվականի դեկտեմբերի 8-ին:
13. Փոստային ծառայությունը չի կարողանում ներկայացնել որևէ ապացույց ծանուցագիրը դիմումատուի կողմից մինչև 2005 թվականի նոյեմբերի 22-ը, կամ առնվազն մինչև նույն թվականի դեկտեմբերի 5-ը, ստացած լինելու վերաբերյալ: Այնուամենայնիվ, փոստային ծառայությունը պնդում է, որ դիմումատուն ստացել է ծանուցագիրը 2005 թվականի նոյեմբերի 22-ին, և ինքը թերություններ աշխատանքում թույլ չի տվել:
14. 2005 թվականի դեկտեմբերի 12-ին դիմումատուն վերաքննիչ դատարանի վճիռը բողոքարկում է վճռաբեկության կարգով: Դիմումատուն իր վճռաբեկ բողոքում խնդրում է բեկանել վերաքննիչ դատարանի վճիռը՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջները, որի համաձայն. «վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին»: Դիմումատուն պնդում է, որ վերաքննիչ դատարանում նիստին մասնակցելու հնարավորությունից զրկված լինելու պատճառով, ինքը զրկված է եղել նաև իր փաստարկները դատարանին պատշաճ ներկայացնելու հնարավորությունից, ինչի հետևանքով դատարանն իր դեմ վճիռ է կայացրել:
15. ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատն (այսուհետ՝ վճռաբեկ դատարանն) իր վճռում նշում է, որ «Գործի հանգամանքները վկայում են, որ հայցվորը վերաքննիչ դատարանում դատական նիստի ժամանակի և

վայրի մասին ծանուցվել է պատշաճ ձևով: Հայցվորը չի ներկայացնում որևէ ապացույց, որը կապացուցեր հակառակը: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը կիրառելու հիմքերը բացակայում են»: Վճռաբեկ դատարանն իր 2006 թվականի հունվարի 18-ի որոշմամբ առանց բավարարման է թողնում դիմումատուի վճռաբեկ բողոքը իսկ վերաքննիչ դատարանի վճիռը թողնում անփոփոխ:

## ***2) Կատարողական վարույթը***

16.2006 թվականի հունվարի 20-ին Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների Դատական ակտերի հակադիր կատարման (ԴԱՀԿ) ծառայության ստորաբաժանունը կատարողական վարույթ է հարուցում գործատուից հօգուտ դիմումատուի 652.000 ՀՀ դրամ բռնագանձելու մասին:

17.2006 թվականի հունվարի 23-ին հարկադիր կատարողը գործատուին օրենքով սահմանված կարգով տեղեկացնում է, որ 2006 թվականի հունվարի 30-ին իրականացնելու է նրա գույքի գույքագրումը: Այս մասին հարկադիր կատարողը տեղեկացնում է նաև դիմումատուին:

18.Այդ որոշման մասին, հարկադիր կատարողը պատշաճ կարգով տեղեկացնում է ինչպես գործատուին, այնպես էլ դիմումատուին:

19.2006 թվականի հունվարի 24-ին հարկադիր կատարողը օրենքով սահմանված կարգով արգելանք է դնում նաև գործատուի բանկային հաշիվների և ֆինանսական միջոցների վրա և առգրավում է գործատուի կանխիկ դրամական միջոցները: Սրա արդյունքում, 2006 թվականի փետրվարի 2-ին դիմումատուին վճարվում է ընդամենը 115.000 դրամ:

20.2006 թվականի հունվարի 30-ին հարկադիր կատարողը այցելում է գործատուին գույքագրում իրականացնելու և գույքի վրա արգելանք դնելու համար:

21.Այնուամենայնիվ հարկադիր կատարողը որոշակի բարդությունների են հանդիպում կատարողական գործողություններն իրականացնելիս: Մասնավորապես, հունվարի

30-ին հարկադիր կատարողը չի կարողանում մուտք գործել գործատուի տարածք, քանի որ այնտեղ ոչ ոք չի լինում:

22. Հետագա մի քանի օրերի ընթացքում ևս, գործատուն անուղղակիորեն խոչընդոտում էր հարկադիր կատարողի գործողություններին, ընդ որում ամեն անգամ գործատուն բերում էր տարբեր պատճառաբանություններ, օրինակ, որ իր մոտ ընթացիկ վերանորոգման աշխատանքներ են ընթանում, կամ որ ինքը կարևոր հանդիպում ունի, որը հետաձգել չի կարող և այլն:

23. Դիմումատուն, ով անհանգստանում էր կատարողական վարույթի նման ընթացքով, փետրվարի 6-ին գրավոր դիմում է ներկայացնում հարկադիր կատարման ծառայությանը, որում պնդում է, որ իր կարծիքով գործատուն դիտավորյալ կերպով է խոչընդոտում կատարողական գործողությունների իրականացումը, քանի որ ցանկանում է ժամանակ շահել իր գույքը վաճառելու համար: Դիմումատուն մասնավորապես նշում է. «... Ես չեմ կարողանում հասկանալ հարկադիր կատարողի անգործության պատճառները: Կարծում եմ, որ եթե հարկադիր կատարողը շահագրգռված չլիներ մեզանից որևէ մեկի շահերը պաշտպանելու խնդրով, ապա պետք է որ վաղուց գործնական քայլեր ձեռնարկած լիներ գործատուին ստիպելու համար որպեսզի նա կատարեր դատարանի վճիռը: Ջարմանալի է, որ հարկադիր կատարողը որևէ կերպ չի ցանկանում գործատուի նկատմամբ կիրառել օրենքով նախատեսված ոչ մի պատասխանատվության միջոց»:

24. Նույն այդ գրությամբ, դիմումատուն նաև բացարկ է հայտնում կատարողական վարույթն իրականացնող հարկադիր կատարողին՝ կասկած հայտնելով նրա անաչառության վերաբերյալ:

25. 2006 թվականի փետրվարի 8-ին դիմումատուի ներկայացրած բացարկը բավարարվում է: Ի դեպ, հարկադիր կատարողի նկատմամբ օրենքով սահմանված կարգով կարգապահական վարույթ է հարուցվում, ինչի հետևանքով նա ազատվում է աշխատանքից:

26. Կատարողական վարույթը հանձնարարվում է այլ հարկադիր կատարողի: Վերջինս 2006 թվականի փետրվարի 15-ին կրկին այցելելով գործատուին կարողանում է իրականացնել գույքագրումը և արգելանք դնել գործատուի գույքի վրա:
27. Նոր հարկադիր կատարողի իրականացրած կատարողական գործողությունների ընթացքում պարզվում է, որ գործատուն չունի գույք, որի վրա կարելի է արգելանք դնել:
28. 2006 թվականի փետրվարի 20-ին հարկադիր կատարողը որոշում է ընդունում կատարողական վարույթը ավարտելու մասին, հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, քանի որ գործատուի գույքը բավարար չէ դիմումատուի պահանջները բավարարելու համար: Դիմումատուի վճիռը 537.000 ՀՀ դրամի մասով մնում է չկատարված:
29. 2006 թվականի փետրվարի 23-ին դիմումատուն հարկադիր կատարողի 2006 թվականի փետրվարի 20-ի որոշումը վիճարկում է առաջին ատյանի դատարանում: Դիմումատուն պնդում է, որ հարկադիր կատարողը չի ձեռնարկել բոլոր հնարավոր գործողությունները գործատուի գույքը և դրամական միջոցները հայտնաբերելու ուղղությամբ: Դիմումատուն դատարանում պնդում է, որ ինքը տեղեկություններ ունի, որ գործատուն բավարար գույք ունեցել է, սակայն հարկադիր կատարողի անգործության հետևանքով հասցրել է այն թաքցնել կամ վաճառել:
30. Առաջին ատյանի դատարանը 2006 թվականի մարտի 7-ի իր վճռով առանց բավարարման է թողում դիմումատուի հայցը՝ վճռելով, որ դիմումատուն իր պնդումները հաստատող պատշաճ ապացույցներ չի ներկայացրել և որոշեց, որ հարկադիր կատարողը գործել է օրենքի պահանջներին համապատասխան:
31. 2006 թվականի մարտի 15-ին դիմումատուն առաջին ատյանի դատարանի այդ վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացնում ՀՀ քաղաքացիական և տնտեսական գործերով վերաքննիչ դատարան (այսուհետ՝ վերաքննիչ դատարան): Դիմումատուն իր վերաքննիչ բողոքում կրկին պնդում է, որ այդ գույքը և դրամական միջոցները փնտրելու ուղղությամբ իր ձեռնարկած քայլերը ցույց են տալիս, որ գործատուն ունի բավարար գույք ու դրամական միջոցներ: Դիմումատուն վերաքննիչ բողոքում

նաև նշում էր, որ այդ պնդումները հաստատող ապացույցներ ունի, որոնք կարող է ներկայացնել դատարանին:

32. Դիմումատուն վերաքննիչ բողոքի հետ միասին ներկայացնում է նաև պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդություն:

33. 2006 թվականի ապրիլի 5-ին վերաքննիչ դատարանը որոշում է ընդունում դիմումատուի վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին, քանի որ դիմումատուին «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածներով պետական տուրքի գծով արտոնություն վերապահված չէ:

34. 2006 թվականի ապրիլի 10-ին դիմումատուն վերաքննիչ դատարանի 2006 թվականի ապրիլի 5-ի որոշումը բողոքարկում է վճարելության կարգով: 2006 թվականի ապրիլի 21-ին ՀՀ վճարել դատարանն առանց բավարարման է թողնում դիմումատուի վճարել բողոքը, իսկ վերաքննիչ դատարանի որոշումը՝ անփոփոխ, այն նույն հիմնավորմամբ, որը տվել էր վերաքննիչ դատարանը:

## V. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔԻ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ

35. Դիմումատուն խնդրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի որ.

ա) Սույն գանգատի նկատմամբ կիրառելի է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը:

բ) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 5-ի դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրեն պատշաճ կարգով չժամուցելը, ինչի արդյունքում ինքը զրկվել է նշված դատական նիստին մասնակցելու հնարավորությունից, խախտում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իր արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես կողմերի հավասարության սկզբունքը:

գ) ԴԱՀԿ ծառայության կողմից, իր նկատմամբ կայացրած և օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռը չկատարելը, խախտում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իր արդար դատաքննության իրավունքը և Եվրոպական կոնվենցիայի Թիվ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իր սեփականության խաղաղ օգտագործման իրավունքը:

դ) Հայաստանի Հանրապետությունը խախտել է Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, քանի որ դիմումատուն գործնականում հնարավորություն չի ունեցել հարկադիր կատարողի գործողությունները վիճարկել և ներպետական դատարաններում:

36. Հայաստանի Հանրապետության կառավարությունը խնդրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի որ.

ա) Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի չէ սույն գանգատի նկատմամբ:

բ) Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դիմումատուի արդար դատաքննության իրավունքի, մասնավորապես կողմերի հավասարության սկզբունքի խախտում առկա չէ, և որ դիմումատուն պատշաճ կարգով ծանուցված է եղել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 4-ի դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

գ) ԴԱՀԿ ծառայության կողմից դիմումատուի նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռը չկատարելու առումով, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության և Եվրոպական կոնվենցիայի Թիվ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության խաղաղ օգտագործման դիմումատուի իրավունքների խախտում առկա չէ:

դ) Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը, քանի որ դիմումատուն և՛ տեսականում, և՛ գործնականում հնարավորություն է ունեցել ներպետական ատյաններում պաշտպանելու իր իրավունքները: